Գ.

Հայրապետական պարգևք.

Կոնդակ Յանուն տ. Գրիգոր եպիսկոպոսի Գառնակերեան, որով շնորհուեցաւ Արքեպիսկոպոսութեան տիտղոս։ Թ. 581.

— Յանուն տ. Տաճատ վարդապետի Մելքոնեան, որով շնորհուեցաւ ականակուռ. լանջախաչ։ Թ. 690.

— Յանուն Գէորգ վարդապետի Ռշտունեոյ ի նոյն միտս։ Թ. 691.

— Յանուն տ. Սահակ վարդապետի Աստուածատրեան ի նոյն միտս։ Թ. 692.

**

ՔԱՂԱՔԱՅԻՆ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մայիսի 5-ին Սինոդը լուծեց Վաղարշապատի բնակիչ Մկրտիչ Ասլանեանի և Վարդիթեր Հայրապետեանի ամուսնութիւնը և իրաւունք տուաւ Մկրտչին նորից ամուսնանալու, Երևանի բնակիչ Գէորգ Մանուկեանի և Սոֆիա Վարդանեան Սաֆարեանի ամուսնութիւնը և իրաւունք տուաւ Սոֆիային կրկին ամուսնանալու։

Մայիսի 10-ին Սինոդը որոշեց տալ կապալաւ Դեստարգել կոչուած հողաբաժինը Առինջ գիւղի բնակիչներին և հրամայեց Երևանի Կոնսիստորիային օրինական համաձայնագրով վստահանալուց յետոյ պայման կապել գիւղի լիազօրների հետ։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց Երևանի վիճ. Կոնսիստորիային հոգևորականութեան մէջ ընդունել Մատթէոս Սայեադեան Անդրէասեանին և ձեռնադրել քահանայ Դաւալու գիւղի վրայ, Նոր Բայազիդի գաւառի Բաբաքիշի գիւղի բնակիչ Սարիբէկ Քոչարեանցին՝ նոյն գիւղի

վրայ քահանայացնելու համար, որոնց մասին և հրաման տուաւ Երևանի փոխ թեմակալին, դարձնելով ընծայացուների վկայականները։

Մայիսի 12-ին Սինոդը որոշեց հրամայել գանձապահ տ. Համազասպ վարդապետին արտաքոյ նախահաշուի 620 ռուբլի վճարել հնձող մեքենայի համար, որը պէտք է գործադրուի Էջմիածնի արտերի համար։

Նոյն թուին Սինոդը որոշեց տալ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանին 300 ռուբլի որպէս նպաստ բժշկութեան համար և ամառուայ չորս ամիսների ռոճիկը։

Նոյն թուին Սինոդը լուծեց Թաթիւլ գիւղացի դատարանով իրաւազուրկ և անդարձ աքսորուած Պօղոս Մատուրեանի պատկը Սոֆիա Բէկլարեանի հետ և իրաւունք տուաւ Սոֆիային կրկին ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Զուչի գիւղի բնակիչ Սարգիս Վարդանեանի ամուսնութիւնը Սադաթ Մառուկեանի հետ և իրաւունք տուաւ Սադաթին նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Թիֆլիզեցի Աղալօ Անտոնեանի ամուսնութիւնը Սոֆիա Անտոնեանի հետ և իրաւունք տուաւ Սոֆիային նորէն ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Երևանի վիճակային Կոնսիստորիային պահանջել Աղէքսանդրապոլի փոխանորդ տ. Արսէն վարդապետից իւր ռոճկի մի երրորդ մասը պաշտօնի նշանակուելու օրից մինչև ներկայ տարուայ մայիս ամիսը, իսկ այնուհետև հոգևոր կառավարութեան միջոցաւ բառնալ նրա ռոճկի մի երրորդ մասը՝ մինչև նրա վրայ եղած 1400 ռուբլի պարտքը կը լրանայ։

Նոյն թուին Սինոդը որոշեց, որովհետև Տաթևի վանքի 1902—1903 թուի մատեաններում նկատում են ինչ ինչ թերութիւններ ու անճշտութիւններ, նաև, ի նկատի առնելով Ստեփան վարդապետ Քօլեանի և Տաթևի ժողովրդոց բողոքները փոխանորդ Ներսէս վարդապետ Մե-

լիք-Թանգեանի դէմ, կարգել քննիչ Մեսրոպ վարդապետ Տէր Մովսիսեանին առ տեղւոյն քննելու Տաթեւի վանուց և հոգևոր կառավարութեան բոլոր դրամական հաշիւներն ու գործերը՝ Ներսէս վարդապետի Փոխանորդ կարգուելու օրից։ Երկրորդ. տ. Ներսէս վարդապետին ժամանակաւորապէս դադարեցնել վանահայրութեան և փոխանորդական պաշտօնավարութիւնից մինչև քննական գործառնութեանց վերջը։ Եւ երրորդ. քննիչ Մեսրոպ վարդապետին ուղարկել Սինոդից և Երևանի Կոնսիստորիայից սոյն քննական գործին վերաբերեալ բոլոր մատեանները և սոյն վճռի կատարման համար հրաման տալ Երևանի Կոնսիստորիային՝ ուղարկելով սոյն գործի վերաբերեալ բոլոր մատեաններն ու գրագրութիւնը, որ հոգայ քննչի ճանապարհածախսը Սինոդի շրջաբերականի համաձայն, իսկ Տաթեւի հոգևոր կառավարութեան կազմը լրացնելու համար կարգի մինին Տաթեւի վանահօր պաշտօնակատար։

Մայիսի 15-ին Սինոդը հեռագրով հրամայեց Գանձակի հոգևոր կառավարութեան վարձել Զարեքայ վանքի անտառի համար հարկաւոր թուով անտառապահներ և նրանց ռոճիկը վճարել անտառի եկամուտներից։

Մայիսի 19-ին Սինոդը լուծեց Զանգեզուրի գաւառի Խնձորեսկ գիւղի բնակիչ Հայրապետ և Ազիզգիւլ Հայրապետեանների պսակը անընդունակութեան պատճառով և իրաւունք տուաւ Հայրապետին նորից ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը լուծեց Թիֆլիզի բնակիչ Միխակ և Մարիամ Յովհաննիսեանի պսակը՝ Միխակի անյայտ բացակայութեան պատճառով և իրաւունք տուաւ Մարիամին նորից ամուսնանալու։

Նոյն թուին Սինոդը թոյլ տուաւ Ծուղրուտ գիւղի բնակիչ Լևոն Զախոյեանի և Իւղաբեր Պօղոսեանի պսակը խնամութեան չորրորդ աստիճանում ի մէջ երկուց խնամութեանց և այս մասին հրամանագրեց Վրաստանի և Իմերէթի վիճ. Կոնսիստորիային։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Երևանի վիճ. Կոնսիստորիային Պետական դրամատան Երևանեան բաժնից հանել քսան և ութ հատ 4% պետական ռէնտաներ քառասուն և չորս հազար ինն հարիւր ռուբլի անուանական գումարից, որը պատկանում է Աղեքսանդրապոլի Արղութեան օրիորդաց դպրոցին և սղարկելով հանգուցեալ իշխան Արղութեանի կտակի քաղուածքը և հարկաւոր վկայութիւնքը, պատուիրել Կոնսիստորիային, որ այդ արժէթղթերը տրուին ի պահ պետական դրամատան որպէս անձեռնմխելի, իսկ ցայսօր դրամագլխից գանձուած տոկոսները տալ Արղութեան դպրոցի հոգաբարձութեան, այսուհետև շարունակել տարեկան տոկոսների պարբերական տուչութիւնը, և 6443 ռուբլի 63 կոպէկի մասին, որը հակառակ Սինոդի կարգադրութեան՝ նախկին գանձապահի կողմից չի յանձնուել Պետական դրամատանը պահպանութեան համար, պատրաստել առանձին զեկուցում։

Նոյն թուին Սինոդը թոյլատրեց ընդունել հոգևորականութեան մէջ Քարինջ գիւղի բնակիչ Տիգրան Խաչատրեանին յիշեալ գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու համար, որի մասին և հրամանագրեց Թիֆլիզի Կոնսիստորիային։

Մայիսի 24-ին Սինոդը որոշեց դատ բանալ Մասատարա գիւղի կապալառու Յովհաննէս Նալբանդեանի դէմ նրա վրայ ապառիկ մնացած 5000 ռուբլի վարձագնի համար և պահանջել պայմանագրով որոշուած տուգանքը Սինոդի փաստաբան պ. Ենգիբարեանի միջոցաւ։

Նոյն թուին Սինոդը հրամայեց Վաղարշապատի հարկահաւաք տ. Անտոն վարդապետին կազմել իւր նախագահութեամբ մի մասնաժողով, որին մասնակցելու է գործակալ տէր Արսէն քահանայ Զոհրաբեանը, վանական կառավարութեան քարտուղար պ. Լևոն Ասլանեանը և երկու պատուաւոր գիւղացիք և կատարել հարկերի նոր և արդարացի բաշխումն համաձայն կալուածոց և ծխականաց ցուցակի։

Նոյն թուին Սինոդը որոշեց գրել Թաւրիզ Մկրտիչ աւագ քահանայ և պ. Զաքարիա Նաղարբէկեանին բանակցել և վարձել երեք խումբ քեահրէզ փորող վարպետներ նորոգելու ս. Էջմիածնի հին քանքաններն ու նորերը փորելու և երկրորդ յատկացնել որոշ գումար հետզհետէ ի կատար ածելու ինժինէր պ. Կիրակոսեանի ծրագիրը վանական կալուածների նորոգութեան և Մայր Աթոռի այլ և այլ հաստատութեանց լուսաւորութեան համար, որի համար և խնդրել նրանից, որ բարեհաճի ներկայացնել աշխատանքների վերջին նախահաշիւը։

Նոյն թուին Սինոդը լուծեց Աննա և Միրզաջան Կարախանեանների պսակը Միրզաջանի անյայտ բացակայութեան՝ պատճառով և իրաւունք տուաւ Աննային կրկին ամուսնանալու։

Մայիսի 31-ին Սինոդը հրամանագրեց Տփխիսի Էջմիածնապատկան կալուածոց կառավարիչ տ. Եփրեմ վարդապետին թողնել Թիֆլիզ գնացող Էջմիածնայ միաբանների բնակութեան համար Վանաց մայր եկեղեցու մօտ եղած տան վերին յարկը և նրա նորոգութեան համար, եթէ կարևորութիւն կայ, կազմել նախահաշիւ ինժինէր պարոն Գրիգորեանի հետ և մատուցանել Սինոդին։

Նոյն թուին Սինոդը որոշեց լուծուած համարել Եղնիկ վարդապետ Գեանջեցեանի կուսակրօն քահանայի կոչումն և դասել աշխարհականների շարքը, որի մասին ծանուցանել իրեն պ. Գեանջեցեանին, վանական կառավարութեան Մայր Աթոռոյ՝ նրա անունը միաբանական ցուցակից հանելու և Գանձակի պ. Նահանգապետին՝ նրան հարկատուաց շարքը դասելու համար։

Յունիսի 2-ին Սինոդը որոշեց տալ տ. Յուսիկ վարդապետին արձակուրդ և ռոճիկ մինչև սեպտեմբերի 1-ը, միանուագ նպաստ 200 ռուբլի բժշկութեան համար և պատշաճաւոր անցաթուղթ։

Նոյն թուին Սինոդը լուծեց Պաղնի գիւղի բնակիչ Կոստանդին Կարապետեանի և Մարիամ Սիմէոնեանի պսակը և տուաւ միայն կնոջը կրկին ամուսնանալու իրաւունք։